ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արգավանդ Կահույք ՍՊԸ-ն ՁՈՒԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/02 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Սեղան, չափսերը՝ լայնությունը՝ 700 մմ, երկարությունը՝ 1100մմ, բարձրությունը 750մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի) համար կօգտագործվի լամինացված ՓՏՍ 18մմ հաստությամբ, գույնը՝ հաճարագույն: Աշխատանքային երեսը կշրջափակվի 2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), և անկյունները մշակվեն: Մնացած բոլոր բաց եզրերը կշրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC)՝ բացառությամբ ոտքերի հատակին հպվող մասերի, նույն ՓՏՍ-ի գույնի: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ: Կողապատերը աշխատանքային երեսին ամրացնելու համար երեսի տակից ամրացվում է լրացուցիչ 80 մմ լայնության լամինացված ՓՏՍ 18մմ: Հատակին հպվող հատվածներում կամրացվեն 4 մետաղական ոտիկներ: Սեղանը ունի 500 մմ լայնության դիմապատ: Միացումներն կիրականացվի թաքնված պտուտակների միջոցով: Ապրանքը կլինի նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, 7-րդ հարկ բարձրացնելը, տեղադրումը իրականացվում է Վաճառողի կողմից: Երաշխիքային ժամկետ՝ 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում կշտկվի տեղում (դետալների փոխարինում) կամ ապրանքը կփոխարինվի նորով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АРГАВАНД МЕБЕЛЬ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՁՈՒԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/02 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	